Հայտարարություն
ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հայտարարում է **մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի (ծածկագիր՝ 95-30.5-Ղ4-1)** քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի (ծածկագիր՝ 95-30.5-Ղ4-1) պարտականությունները՝

1. Հետևել մարզի զարգացման ռազմավարության և տարեկան գործունեության ծրագրի մշակման և կազմման աշխատանքներին, արդյունաբերության, զբոսաշրջության, փոքր և միջին ձեռներեցության աջակցության բնագավառներում իրականացվող աշխատանքներին.
2. Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման նպատակով նախնական հայտերը համապատասխանեցնել իրավական փաստաթղթերով սահմանված լրացման կարգի պահանջներին, ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.
3. Մշակել համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ առաջարկություններ և ներկայացնել ըստ անհրաժեշտության, ինչպես նաև կատարել դրանց վերաբերյալ վերլուծական աշխատանքներ.
4. Մեթոդական ցուցումներ և խորհրդատվություն տրամադրել համայնքների ղեկավարներին ծրագրերի նախագծերի մշակման գործում.
5. Իրականացնել այլ երկրների վարչատարածքային մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում մարզը ներկայացնելու, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքներ.
6. Հետևել մարզում զբոսաշրջային ընկերությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունների հավաքագրմանը և լիազոր մարմնին պարբերական տրամադրել տեղեկատվություններ և հաշվետվություններ.
7. Հյուրանոցային տնտեսություններից և կազմակերպություններից հավաքագրել զբոսաշրջության բնագավառի վերաբերյալ տեղեկատվություն և տրամադրել ոլորտը համակարգող լիազոր մարմնին.
8. Միջազգային, բարեգործական (այդ թվում՝ սփյուռքի), հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների կողմից մարզում իրականացված ծրագրերի վերաբերյալ հավաքագրել տեղեկատվություն և ներկայացնել մարզպետին.
9. Վերահսկել մարզի համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի էլեկտրոնային գրադարանը, համայնքների վարչական շտերմարանների էլեկտրոնային համակարգի վարման աշխատանքները.
10. Հետևել տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի մարզային կայքէջի (բացառությամբ «նորություններ» բաժնից) ինֆորմացիոն սպասարկման (տեղադրման, թարմացման) և շտեմարանների վարման աշխատանքների իրականացմանը և դրանց տեղադրմանը կայքում.

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի (ծածկագիր՝ 95-30.5-Ղ4-1) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ է.

-բարձրագույն կրթություն.
- Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.
-սույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն
-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
-անհրաժեշտ կոմպետենցիաների տիրապետում

Վերը նշված պաշտոնը կարող են զբաղեցնել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:
Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:
Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝
1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.
3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.
4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
-գրավոր դիմում (լրացվում է տեղում)
-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները՝ բնօրինակի հետ միասին,
-աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում)՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք
-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք
-մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի
-անձնագրի պատճենը՝ բնօրինակի հետ միասին

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչեւ ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացումը՝ 17.04.2025թ ներառյալ
Աշխատավարձի չափը՝ 322816 ՀՀ դրամ
Աշխատանքը իրականցվելու է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում՝ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ք. Վանաձոր, 2001, Հայքի հրապարակ
Փաստաթղթերն ընդունվում են՝ 2025թ-ի մարտի 10-ից ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 12:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ընտրություն կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:
ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ք. Վանաձոր, 2001, Հայքի հրապարակ, հեռ.0322-2-10-24)
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2025թ-ի մարտի 13-ը, ժամը՝ 12:00: